ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Գենդերային քաղաքականության 2011 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների մասին

Մարզեր	***միջոցառման անվանումը***	***կատարված աշխատանքը***	***ֆինանսավորման աղբյուրը***
Արմավիր	Շարունակել կանանց լիդերության և սեփական իրավունքների պաշտպանության տեխնոլոգիաների ուսուցման դասընթացների կազմակերպման գործընթացը	Մարզի համայնքներում, պետական կառույցներում կազմակերպվել են գենդերային հիմնախնդիրներին նվիրված և գենդերային քաղաքականության իրազեկման ուղղված միջոցառումներ. անցկացված սեմինարները, դասընթացները, կլոր սեղանները, ինտերակտիվ քննարկումները նպատակ են հետապնդել բարձրացնելու կանանց իրավունքների իրազեկման մակարդակը, կիրառելիությունը, հասարակական ակտիվությունը: Մարզի հասարակական կյանքում նկատվել է կանանց գործունեության ակտիվացում, նրանց կողմից տարբեր նախաձեռնությունների դրսևորում:	ՀՀ Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ
	Ստեղծել ուսումնամեթոդական հիմք՝ գենդերային գիտելիքների հիմունքների դասավանդման համար	1. Հանրակրթական դպրոցներում <<Հասարակագիտություն>>, <<Առողջ ապրելակերպ>> առարկաների ծրագրերում ընդգրկված են գենդերային հիմնախնդիրներին առնչվող թեմաներ և բաժիններ: Այդ առարկաների շրջանակներում կազմակերպվել են բաց դասեր, քննարկումներ, բանավեճեր: 2. Հանրակրթական դպրոցների ավագ	ՀՀ Արմավիրի մարզպետարանի աջակցությամբ

		դասարանների աշակերտների մասնակցությամբ անցկացվել են շարադրությունների մրցույթներ՝ <<Հավասարը հավասարին>>, <<Ներդաշնակ հասարակություն>> թեմաներով: Մարզի արվեստի, գեղարվեստի և հանրակրթական դպրոցների տարրական դասարանների աշակերտների մասնակցությամբ անցկացվել է «Գենդերային հավասարություն» թեմայով 4-րդ միջազգային նկարչական մրցույթի մարզային փուլը՝ «Լինում են, չեն լինում մի աղջիկ ու մի տղա. նրանք միասին ցանկանում էին ավելի լավը դարձնել աշխարհը…» խորագրով: 3. Դասղեկների, հոգեբանների և սոցիալական մանկավարժների աշխատանքային ծրագրերում ներառված են հասարակության մեջ գենդերային հիմնախնդիրներին առնչվող բաժիններ, և նրանց կողմից ևս աշխատանքներ են տարվել աշակերտների հետ:	